Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-117-17.10.2012-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-98 օրենքի 1-ին հոդվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի>> (այսուհետ՝ Կանոնագիրք) 2-րդ հոդվածի 3-րդ մասում <<, ինչպես նաև կալանատանը և կարգապահական գումարտակում գտնվող անձանց>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Կանոնագրքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<- կայազորի զինվորական պարետ.>>.

2) ուժը կորցրած ճանաչել 7-րդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 3. Կանոնագրքի 17-րդ հոդվածում՝

1) 6-րդ պարբերությունում <<, ինչպես նաև կարգապահական մեկուսարանում մեկուսացվածներին պահելու ծառայությունը ճիշտ կատարելը>> բառերը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

<<- կայազորի զորամասերը մարտական պատրաստականության աստիճանների բերելու /բացառությամբ ուսումնական նպատակով իրականացվող միջոցառումների/ դեպքում կայազորի կարգապահական վաշտում տույժ կրող զինծառայողին կարգապահական վաշտից վերադարձնել համապատասխան զորամաս՝ մարտական պատրաստականության բերման պլանում սահմանված ժամկետները հաշվի առնելով, իսկ միջոցառման ավարտից հետո ապահովել զինծառայողին կարգապահական վաշտ վերադարձնելը՝ տրված տույժի ժամկետը կրելու համար.

- կարգապահական վաշտի հրամանատարի հիմնավորված զեկուցագրի հիման վրա կարգապահական վաշտում տույժ կրող զինծառայողի նկատմամբ կիրառել <<կարգապահական վաշտ ուղարկելը>> կարգապահական տույժ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.>>:

ՀՈԴՎԱԾ 4. Կանոնագրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ պարբերությունում <<կարգապահական մեկուսարանում մեկուսացվածների հսկումը,>> բառերը փոխարինել <<կարգապահական վաշտում տույժ կրող զինծառայողների,>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 5. Կանոնագրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում <<հողամերձ>> բառը փոխարինել <<մթնոլորտի երկրամերձ>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. Ուժը կորցրած ճանաչել կանոնագրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 7. Կանոնագրքի 26-րդ հոդվածին նախորդող վերնագիրը հանել և 26-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 8. Կանոնագրքի 27-րդ հոդվածին նախորդող վերնագիրը հանել և 27-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 9. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 33-րդ հոդվածի՝

1) 3-րդ, 4-րդ և 7-րդ պարբերությունները.

2) 2-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 10. Կանոնագրքի՝

1) <<ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ>> բառերը և 2-րդ մասի վերնագիրը հանել.

2) <<ԳԼՈՒԽ II>> բառը և գլուխ 2-ի վերնագիրը հանել.

3) ուժը կորցրած ճանաչել 36-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 11. Կանոնագրքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Կայազորի զինվորական պարետը կայազորային ու պահակային ծառայությունների հարցերով ենթարկվում է կայազորի պետին և պատասխանատու է կայազորի պահակախմբերի ու պարեկների ծառայության կազմակերպման համար: Կայազորի զինվորական պարետ է նշանակվում կայազորի պետին ենթակա շտաբի պետը, իսկ Երևան քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետը:>>.

2) 2-րդ մասում <<ոստիկանության պետը և>> բառերը հանել, իսկ <<ունեն>> բառը փոխարինել <<ունի>> բառով:

ՀՈԴՎԱԾ 12. Կանոնագրքի 38-րդ հոդվածի՝

1) 6-րդ պարբերությունում <<, պարեկների, զինվորական ավտոտեսչության հսկիչ կետերի>> բառերը հանել.

2) ուժը կորցրած ճանաչել 8-րդ, 16-րդ և 20-րդ պարբերությունները.

3) 11-րդ պարբերությունում <<և զինվորական ավտոտեսչության հսկիչ կետերի>> բառերը հանել.

4) 13-րդ պարբերությունում <<, իսկ պարեկությունների պետերին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ու կապի միջոցներ>> բառերը հանել.

5) 14-րդ պարբերությունում <<ոստիկանության մարմինների>> բառերը փոխարինել <<իրավապահ մարմինների>> բառերով.

6) 24-րդ պարբերությունում <<պետավտոտեսչության մարմինների>> բառերը փոխարինել <<ճանապարհային ոստիկանության>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 13. Կանոնագրքի 39-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում <<կանոնադրությանը համապատասխան, իսկ հարբած զինծառայողների կողմից կարգապահությունը խախտելու դեպքում՝ նրանց պահել կարգապահական մեկուսարանում մինչեւ սթափվելը, բայց մեկ օրից ոչ ավելի, այնուհետեւ վճիռ կայացնել նրանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ>> բառերը փոխարինել <<կանոնագրքին համապատասխան>> բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 14. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 40-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ և 46-րդ հոդվածները, իսկ 45-րդ հոդվածին նախորդող վերնագիրը և 46-րդ հոդվածին նախորդող վերնագիրը հանել:

ՀՈԴՎԱԾ 15. Կանոնագրքի 50-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Կայազորի զինվորական պարետը յուրաքանչյուր ամիս կազմում է կայազորային վերակարգի տեղեկագիր՝ համաձայն հավելված 2-ի, որը հաստատում է կայազորի պետը:>>.

2) 3-րդ մասում <<պարետի օգնականը>> բառերը փոխարինել <<պարետը>> բառով:

ՀՈԴՎԱԾ 16. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 17. Կանոնագրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Պահակապետի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում պահակախմբերի հերթապահը նրա պարտականությունների կատարումը դնում է պահակապետի օգնականի (պահակադիրի) վրա և զորամասից կանչում է նոր պահակախումբ՝ կազմակերպելով պահակախմբերի հերթափոխը, որի վերաբերյալ անհապաղ զեկուցում է կայազորի զինվորական պարետին:>>:

ՀՈԴՎԱԾ 18. Կանոնագրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունում <<՝ 165-179 հոդվածների ցուցումներին համապատասխան>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 19. Կանոնագրքի 59-րդ հոդվածում <<առանց կոշիկների, չհանելով>> բառերը փոխարինել <<՝ չհանելով կոշիկները,>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 20. Կանոնագրքի 65-րդ հոդվածում <<, որի համար զորամասից նշանակվում են կայազորի պարեկներ, իսկ կայազորի զինվորական պարետատանը կից նշանակվում են պահեստային պարեկներ, ապահովված տրանսպորտային միջոցով>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 21. Կանոնագրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասում <<պարետատանը>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 22. Կանոնագրքի 67-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Կայազորի պարեկները ենթարկվում են կայազորի զինվորական պարետին:>>:

ՀՈԴՎԱԾ 23. Կանոնագրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունում <<պարեկության պետերը, որպես կանոն, զինվում են երկու լիցքավորված պահեստատուփ ունեցող ատրճանակով,>> բառերը փոխարինել <<պարեկության պետը կրում է ատրճանակ՝ երկու լիցքավորված պահեստատուփով,>>:

ՀՈԴՎԱԾ 24. Կանոնագրքի 70-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում <<կազմում է կայազորի զինվորական պարետը,>> բառերը փոխարինել <<համատեղ կազմում են կայազորի զինվորական պարետը և կայազորի ռազմական ոստիկանության բաժնի պետը,>>.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Պարեկության ուրվագծում նշվում են պարեկների երթուղիները:>>.

3) 3-րդ մասում <<, կայազորի զինվորական պարետատան, ոստիկանության մերձակա կետերի հետ կապվելու եղանակները և զեկուցման կարգը>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 25. Կանոնագրքի 71-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<պարեկության ընթացքում առանց անհրաժեշտ փաստաթղթերի կամ հակահիրավական վարքագիծ դրսևորող կամ հասարակական կարգը խախտող կամ ակնհայտ ալկոհոլ կամ թմրանյութ կամ այլ հոգեմետ նյութեր օգտագործած վիճակում գինծառայող հայտնաբերելու դեպքում, պարեկների ուղեկցությամբ գինծառայողին տեղափոխել համապատասխան ռազմական ոստիկանության բաժին (բաժանմունք):>>.

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 5-րդ, 6-րդ, 7-րդ պարբերությունները և 3-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 26. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 75-րդ, 76-րդ, 77-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածները:

ՀՈԴՎԱԾ 27. Կանոնագրքի 4-րդ գլխի վերնագրում <<ԿԱՅԱԶՈՐԻ>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 28. Կանոնագրքի 81-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Զինվորական ավտոտեսչությունն ապահովում է <<Ռազմական ոստիկանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով ռազմական ոստիկանությանը վերապահված լիազորությունների իրականացումը:

Կայազորի տարածքում իրականացվող միջոցառումներին զինվորական ավտոտեսչությունը ներգրավվում է կայազորի զինվորական պարետի և կայազորի ռազմական ոստիկանության բաժնի պետի կողմից համատեղ մշակված պլանի համաձայն, որը հաստատվում է կայազորի պետի կողմից:>>:

ՀՈԴՎԱԾ 29. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 82-րդ հոդվածի 2-րդ մասը, 84-րդ, 85-րդ, 86-րդ, 87-րդ, 89-րդ և 90-րդ հոդվածները:

ՀՈԴՎԱԾ 30. Կանոնագրքի 83-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում <<պետավտոտեսչության հսկիչ կետերի ու>> բառերը փոխարինել <<ճանապարհային ոստիկանության>> բառերով.

2) 3-րդ մասում <<ու պարեկների>> բառերը հանել, իսկ <<զինվորական պարետատան, պետավտոտեսչության բաժանմունքների>> բառերը փոխարինել <<զինվորական պարետի, ճանապարհային ոստիկանության>> բառերով.

3) 4-րդ մասի առաջին նախադասությունում <<, պարեկների>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 31. Կանոնագրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասում <<կալանվել>> բառը փոխարինել <<արգելանքի վերցվել>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 32. Կանոնագրքի 92-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում <<մեկուսարանում և>> բառերը հանել.

2) 4-րդ մասում <<, ինչպես նաև կայազորային կարգապահական մեկուսարանում գտնվող անձանց հսկելու>> բառերը հանել.

3) 6-րդ մասում <<, ինչպես նաև մեկուսացված զինծառայողներին հսկելու>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 33. Կանոնագրքի 93-րդ հոդվածի 1-ին մասում <<, կարգապահական մեկուսարանի պահակախումբը ենթարկվում է նաև կարգապահական մեկուսարանի պետին>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 34. Կանոնագրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում <<, իսկ կարգապահական մեկուսարանի պահակախմբում՝ ուղեկցորդներ>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 35. Կանոնագրքի 100-րդ հոդվածի 1-ին մասում <<օրենքով սահմանված կարգով ձերբակալված, կալանավորված ու ազատազրկման դատապարտված զինծառայողներին հսկելու,>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 36. Կանոնագիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 109.1-րդ հոդվածով.

<<<Հոդված 109.1. Զորամասերում պահակային ծառայությունը կարող է կազմակերպվել նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող անձանց հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու միջոցով (այսուհետ՝ գերատեսչական պահպանություն):

Գերատեսչական պահպանությունն իրականացվում է ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների կողմից: Ռազմականացված պահակային ստորաբաժանումների կողմից գերատեսչական պահպանությունն իրականացվում է ծառայողական զենքով:

Գերատեսչական պահպանության իրականացման կարգը և գերատեսչական պահպանության ենթակա զորամասերի ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:>>:

ՀՈԴՎԱԾ 37. Կանոնագրքի 119-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Կայազորային պահակախմբերի կարգացուցակը հաստատում է կայազորի պետը, իսկ զորամասերի պահակախմբերի կարգացուցակը՝ զորամասի հրամանատարը:>>:

ՀՈԴՎԱԾ 38. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 122-րդ հոդվածի 4-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 39. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 40. Կանոնակարգի 126-րդ հոդվածի 1-ին մասում <<հերթափոխման>> բառը փոխարինել <<փոխարինման>> բառով:

ՀՈԴՎԱԾ 41. Կանոնակարգի 129-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում <<մակետի>> բառը փոխարինել <<մանրակերտի>> բառով.

2) 4-րդ մասում <<հերթափոխումից>> բառը փոխարինել <<փոխարինումից>> բառով:

ՀՈԴՎԱԾ 42. Կանոնակարգի 130-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերություններում <<հերթափոխման>> բառը փոխարինել <<փոխարինման>> բառով:

ՀՈԴՎԱԾ 43. Կանոնակարգի 131-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում <<<Հերթափոխումից>> բառը փոխարինել <<Փոխարինումից>> բառով.

2) 2-րդ մասում <<պահեստատուփերը>> բառից առաջ լրացնել <<լիցքավորված>> բառը:

ՀՈԴՎԱԾ 44. Կանոնակարգի 134-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում <<հերթափոխելու>> բառը փոխարինել <<հերթափոխի>> բառով, իսկ <<, ինչպես նաև մեկուսացված զինծառայողների անկարգությունները կամ փախուստը կանխելու համար>> բառերը հանել.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Առանց նախազգուշացման զենք կարող է գործադրվել սույն հոդվածի 1-ին մասում սահմանված օբյեկտների վրա զենքի կամ մարտական տեխնիկայի կամ տրանսպորտային միջոցների կամ թռչող սարքերի օգտագործմամբ հանկարծակի հարձակում կատարվելիս:>>:

ՀՈԴՎԱԾ 45. Կանոնակարգի 135-րդ հոդվածի՝

1) 3-րդ պարբերությունում <<պահակակետից գույքացուցակով>> բառերը փոխարինել <<պահակապետից ցուցակով>> բառերով, իսկ <<զինամթերքի>> բառից առաջ լրացնել <<իսկ գույքացուցակով՝>> բառերը.

2) 4-րդ պարբերությունում <<արտաքին>> բառից հետո լրացնել <<և պահակատան ներքին>> բառերը, իսկ <<ինչպես նաև պահակատան և մեկուսարանի,>> բառերը հանել.

3) 10-րդ պարբերությունում <<ժամապահին կանչելու>> բառերը փոխարինել <<ժամապահի կողմից կանչ ստանալու>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 46. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 47. Կանոնակարգի 143-րդ հոդվածի 6-րդ մասում <<կալանատան և>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 48. Կանոնակարգի 149-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունում <<պահակապետերի>> բառը փոխարինել <<պահակակետերի>> բառով:

ՀՈԴՎԱԾ 49. Կանոնակարգի 153-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունում <<հիման վրա>> բառերը փոխարինել <<նպատակով>> բառով:

ՀՈԴՎԱԾ 50. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 164-րդ, 165-րդ, 166-րդ, 168-րդ հոդվածները, 174-րդ հոդվածի 7-րդ պարբերությունը, իսկ 164-րդ հոդվածին նախորդող վերնագիրը հանել:

ՀՈԴՎԱԾ 51. Կանոնակարգի 182-րդ հոդվածում <<ստանձնելուց հետո>> բառերը փոխարինել <<ստանձնելիս>> բառով, իսկ <<, մեկուսարանում գտնվողներին հսկելու համար հերթափոխը ստանձնելիս նա պետք է ստուգի փականների և վանդակացանցերի սարքինությունը և խցերում եղած մեկուսացվածների քանակը>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 52. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 197-րդ, 201-րդ և 202-րդ հոդվածները, իսկ 201-րդ հոդվածին նախորդող վերնագիրը հանել:

ՀՈԴՎԱԾ 53. Կանոնակարգի 208-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում <<, ուղեկցորդները՝ նրանցից ձախ>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 54. Կանոնակարգի 209-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Ձեկույցի ավարտից անմիջապես հետո նվագախումբը վերսկսում է նվագը:>>:

ՀՈԴՎԱԾ 55. Կանոնակարգի 226-րդ հոդվածում <<, մեկուսարանի>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 56. Կանոնակարգի 227-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ նախադասությունում <<ծալում սվինը,>> բառերը փոխարինել <<հանում է սվին-դանակը,>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 57. Կանոնակարգի 251-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում <<, իսկ չնշանակված պահակախմբերում՝ պահակապետի>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 58. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 259-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 59. Կանոնագրքի հավելված 1-ի աղյուսակում 12-րդ և 13-րդ սյունակները հանել:

ՀՈԴՎԱԾ 60. Կանոնագրքի հավելված 4-ի՝

1) Պահակակետերի կարգացուցակում <<Ուղեկցողները>> տողը հանել.

2) երկրորդ ծանոթության 4-րդ կետում <<ուղեկցողներից>> բառը փոխարինել <<հերթապահությունը ստանձնելու ժամանակի նշումից>> բառերով.

3) ուժը կորցրած ճանաչել պահակակետի տեղեկագրի 4-րդ էջի 4-րդ կետը.

4) երրորդ ծանոթության 3-րդ կետում <<զինվորական պարետատանը>> բառերը փոխարինել <<զորամասի շտաբում>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 61. Կանոնագրքի հավելված 5-ի 1-ին կետի 2-րդ մասի՝

1) երկրորդ նախադասությունում <<10մ-ից ավելին լինել>> բառերը փոխարինել <<լինել 5 մետրից մինչև 10 մետր>> բառերով.

2) երրորդ նախադասությունում <<5մ-ից ոչ պակաս>> բառերը փոխարինել <<2 մետրից մինչև 5 մետր>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 62. Կանոնագրքի հավելված 6-ի՝

1) 2-րդ կետի 1-ին մասի 5-րդ պարբերությունում <<նկարագրող>> բառից հետո լրացնել <<, ինչպես նաև լավագույն ժամապահների>> բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետի 1-ին մասի 10-րդ պարբերությունը և 10-րդ կետի 2-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 63. Կանոնագրքի հավելված 8-ի 1-ին կետի 3-րդ մասի երրորդ նախադասությունում <<, ուղեկցորդների>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 64. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի հավելված 12-ը և հավելված 14-ը:

ՀՈԴՎԱԾ 65. Կանոնագրքի հավելված 13-ի՝

1) վերնագրում <<զորամասի>> բառը փոխարինել <<զորամասերի>> բառով.

2) 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<1. Մեկ զորամասից մեկ այլ զորամաս գործուղված զինծառայողը գործուղման վայրի զորամաս ժամանելու օրը հաշվառման է վերցվում տվյալ զորամասում: Եթե զինծառայողի գործուղումը կապված չէ որևէ զորամասի հետ, ինչպես նաև արձակուրդի մեկնելու դեպքում, զինծառայողը հաշվառման կանգնելու համար պարտավոր է ներկայանալ գործուղման կամ արձակուրդի վայրի տարածքային զինվորական կոմիսարիատ՝ գործուղման կամ արձակուրդի վայր ժամանելուց ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում: Գործուղման կամ արձակուրդի վայր ժամանելու, ինչպես նաև գործուղման կամ արձակուրդի վայրից մեկնելու մասին զորամասի կամ զինվորական կոմիսարիատի իրավասու պաշտոնատար անձի կողմից գրառում է կատարվում գործուղման վկայականում կամ արձակման թերթիկում:>>.

3) ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը.

4) 3-րդ կետում <<կայազորի զինվորական պարետատուն, զինկոմիսարիատ կամ պետական իշխանության ու կառավարման տեղական մարմին (որտեղ հաշվառման են անցել)>> բառերը փոխարինել <<հաշվառումն իրականացրած մարմին>> բառերով.

5) 4-րդ կետում <<կայազորի պարետատանը (զինվորական կոմիսարիատում)>> բառերը փոխարինել <<զինվորական կոմիսարիատումներում>> բառերով.

6) ուժը կորցրած ճանաչել 5-րդ կետի երկրորդ նախադասությունը.

7) 6-րդ կետի 3-րդ մասում <<և զորամասը (ստորաբաժանման անձնախումբը) հաշվառման վերցնել կայազորի զինվորական պարետատանը հենց ժամանման օրը>> բառերը փոխարինել <<՝ ժամանման օրը>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 66. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: